10661

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարարի
Հակոբ Սիմիդյան

«22» 07 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0102-22

Ձեռնարկողը՝ ***«Հայգյուղշիննախագիծ» ՍՊԸ***
Ք. Երևան, Կիևյան 16

Գործունեությունը՝ ***Սալվինազի ջրանցքի վերակառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Շիրակի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0102-22

«22» 07 2022թ.

Սալվինազի ջրանցքի վերակառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս

Պատվիրատու՝	«Հայգյուղշիննախագիծ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության Նախնական գնահատման հայտ
Գործունեության կատեգորիա՝	«Գ»
Տեղադրման վայրը՝	Շիրակի մարզ, Գյումրի համայնքի

Համաձայն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտի/այսուհետ՝ հայտ/ «Կոտայք, Գեղարքունիք, Շիրակ, Թալին, Եղեգնաձոր և Սյունիք ՋՕԸ-երի սպասարկման տարածքների ոռոգման համակարգերի վերականգնման նախագծում և հեղինակային հսկողություն» ծրագրով նախատեսվում է Գյումրի համայնքի Սալվինազի ջրանցքի վերակառուցման աշխատանքներ:

Ծրագիրն իրականացվում է «Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագրի» շրջանակներում Եվրասիական բանկի կողմից կառավարվող Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի կողմից տրամադրած ֆինանսավորմամբ: Ծրագրի նպատակն է՝ Հայաստանի ոռոգման ենթակառուցվածքների արդիականացումը և արդյունավետության բարձրացումը՝ կատարելով որոշ մայր և երկրորդ կարգի ջրանցքների վերականգնում, կրճատելով շահագործման և պահպանման ծախսերը, կրճատելով ոռոգման ջրի կորուստները, բարձրացնելով ջրօգտագործողների ընկերությունների աշխատանքի արդյունավետությունը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 3-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Ուսումնասիրվող ջրանցքը գտնվում է Շիրակի մարզում, ընդգրկում է Գյումրի քաղաքի հյուսիս-արևելյան եզրամասի տարածքները և այդ ուղղությամբ ոռոգվող հողերի մի մասը, ինչպես նաև ջուր է հասցնում Շիրակի և Ազատան համայնքների ոռոգվող հողատարածքներին:

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը գտնվում է Շիրակի ակումուլյատիվ դաշտավայրի ալյուվիալ-պրոլյուվիալ առաջացումների և հրաբխանստվածքային կուտակումների տարածքում: Ռելիեֆը հիմնականում հարթ է, բարդացված առանձին ոչ խորը ձորակներով և ցածր բլրաթմբերով: Բացարձակ նիշերը տատանվում են 1515-1530 մ սահմաններում:

Երկրաբանական կառուցվածքում մասնակցում են միոպլիոցենի հասակի բազալտները և հրաբխային խարամները, չորրորդական հասակի հրաբխանստվածքային տուֆերը, որոնց ծածկում են ժամանակակից դելյուվիալ-պրոլյուվիալ, լճա-ալյուվիալ առաջացումների խիստ անկայուն հզորության շերտերը:

Գյումրիի տարածաշրջանում կլիման լեռնացամաքային է, որը բնորոշվում է զով ամառով և հարաբերական խոնավությամբ, խիստ ցուրտ ձմեռով և բարձր խոնավությամբ, ինչպես նաև ուժեղ քամիներով՝ 5-7 մ/վ արագությամբ: Հուլիս ամսվա միջին ամսական ջերմաստիճանը 16^{0}C է, իսկ հունվարի միջին ամսական ջերմաստիճանը -5^{0}C-ից -12^{0}C է: Հարաբերական խոնավությունը՝ 70%: Տարեկան տեղումների քանակը հասնում է 498 մմ-ի:

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքը հարուստ չէ գրունտային ջրերով: Բուն տարածքում գրունտային ջրի ելքերը բացակայում են, դրանք ուսումնասիրվող տարածքում 10 մետրից ավելի խորը հորիզոններում են: Դիտարկվող տարածքն ընդգրկված է Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքում:

Համաձայն հայտի գործունեության ենթակա տարածքները գտնվում են Շիրակի ֆլորիստիկական շրջանում, որտեղ բուսականության տիպը հիմնականում տափաստանային է, մարգագետնատափաստանային և մարգագետնային: ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ չեն հայտնաբերվել, բացակայում են բնապահպանական տեսանկյունից խոցելի տարածքները, ինչպես նաև պատմամշակութային արժեքները:

Համաձայն հայտի Սալվինազի ջրանցքը սկիզբ է առնում Շիրակ գյուղի հյուսիսային հատվածով անցնող Շիրակի ջրանցքից և նախատեսված է հիմնականում Շիրակ և Ազատան համայնքների հողերի ոռոգման համար: Ջրանցքի ընդհանուր երկարությունը կազմում է շուրջ 17.85կմ: Կիսախողովակներով մոտ 600մ երկարությամբ ջրանցքն անցնում է Գյումրի քաղաքի բնակիչների բակերով, որոնք ամբողջությամբ կառուցապատված են և սեփականաշնորհված: Շինարարություն իրականացնելու համար ոչ միայն չկա ջրանցքի օտարման գոտի, այլև մոտենալու հնարավորություն: Ջրանցքի որոշ հատվածներ ծածկված են բնակիչների կողմից: Սալվինազի ջրանցքը կառուցված է 700մմ տրամագծով և մոտ 1կմ երկարությամբ պողպատե խողովակաշարով և ավարտվում է արտանետման ավազանով: Արտանետման ավազանը և մոտ 300մ երկարությամբ ջրանցքը գտնվում են գարեջրի գործարանի տարածքում: Գործարանից հետո մոտ 700 մ երկարությամբ ջրանցքը կառուցված է ԼՌ -6 տիպի կիսախողովակներով, իսկ մնացած հատվածը հողային հունով ջրանցք է:

Համաձայն հայտի առաջին հերթին նախատեսվում է վերակառուցել ջրանցքի երկաթբետոնե կիսախողովակներով կառուցված վերջնամասի հատվածը: Այդ հատվածը ոռոգման ջուր է հասցնում Շիրակի և Ազատան համայնքների 345 հա ոռոգվող հողերի, այդ թվում փաստացի ոռոգվող 70 հա հողատարածքներին:

Դիտարկվել է բնակավայրի հատվածը շրջանցող ստորգետնյա խողովակաշարի կառուցման տարբերակ և որպես առաջնահերթ առանձնացվել են 2.619կմ ընդհանուր երկարությամբ 2 հատվածներ: Գյումրի քաղաքի տարածքով անցնող Սալվինազի ջրանցքի արդիականացման համար կատարվելու է հիմնանորոգման աշխատանքներ 2 տեղամասերում.

Նոր կառուցվող 1-ին տեղամասի ուղեգիծը՝ 1.56 կմ երկարությամբ, սկիզբ է առնում Գյումրի քաղաքի հյուսիսարևելյան եզրամասից, Արևիկ գնացող խաչմերուկի մերձակայքով անցնող առկա Սալվինազ ջրանցքից և անցնելով արևմտյան ուղղությամբ ստորգետնյա տեղադրմամբ, ասֆալտե փողոցին զուգահեռ, հասնում է ուղեգծի վերջը:

2-րդ տեղամասի ուղեգիծը՝ 1.059 կմ երկարությամբ, սկիզբ է առնում նույն Սալվինազի ջրանցքից, գարեջրի գործարանի արևելյան եզրամասի մերձակայքից և անցնելով հարավարևելյան ուղղությամբ, կատարելով որոշ թեքումներ, հասնում է Ազատանի տարածքի ոռոգելի հողերին՝ միանալով նույն Սալվինազի ջրանցքի նշված հատվածին:

Նախատեսվում է բնակավայրի հատվածը շրջանցող ստորգետնյա խողովակաշարի կառուցում, որի համար կառուցվելու է 1560մ ընդհանուր երկարությամբ և 700մմ տրամագծով պողպատե ստորգետնյա խողովակաշար, որը կհանդիսանա Գյումրի քաղաքի Կոմիտաս թաղամասը շրջանցող նոր ջրագիծը:

Շրջանցող ստորգետնյա ջրագիծը միացվելու է գոյություն ունեցող 700մմ տրամագծով ստորգետնյա ոռոգման ջրագծին, որտեղ նախատեսվում է կառուցել փականային հանգույց:

Փականային հանգույցի մոտից գոյություն ունեցող 700մ երկարությամբ բարվոք վիճակում գտնվող ստորգետնյա տեղադրված պողպատե խողովակաշարով ոռոգման համար անհրաժեշտ ջուրը կտեղափոխվի արտանետման ավազանից մոտ 85մ հեռավորության վրա գտնվող գարեջրի գործարանի պարիսպից դուրս գտնվող հատված, ինչի արդյունքում գործարանի տարածքից ջրանցքի մոտ 300 գծամետր հատվածը նախատեսվում է ապամոնտաժել և շահագործումից դուրս բերել: Գործարանի պարիսպից դուրս գտնվող այդ հատվածը հանդիսանալու է Սալվինազի ջրանցքի վերակառուցման ենթակա 2-րդ հատվածի սկզբնակետը, որտեղ նախատեսվում է կառուցել ԼՌ-8 տիպի վաքերով 1059մ ընդհանուր երկարությամբ ջրանցք:

Սալվինազի ջրանցքի 2-րդ հատվածի վերակառուցումը նախատեսված է Ազատան գյուղի հողատարածքների ոռոգման համար:

Ազատան համայնքի հողերի՝ ոռոգման ջրով լիարժեք ապահովման համար նախատեսվում է կառուցել շրջանցիկ ստորգետնյա խողովակաշար՝ 1560մ երկարությամբ և 700մմ տրամագծով (1-ին հատված), ինչպես նաև առկա հողային հունով ջրանցքը վերակառուցել հավաքովի ե/բ ԼՌ-8 տիպի վաքերով՝ 1059 մ ընդհանուր երկարությամբ (2-րդ հատված):

Վերակառուցվող 2-րդ հատվածում նախատեսվում է տեղադրել նաև նոր ջրթողներ և անկյունային հորեր:

Նախատեսվող ստորգետնյա տեղադրմամբ պոլիէթիլենե խողովակներով ջրանցքի ուղեգծի սկզբնամասի շուրջ 2.0կմ հատվածը նախատեսված է կառուցել նոր ուղեգծով՝ դաշտամիջյան ճանապարհների եզրերով, իսկ մնացած շուրջ 2.86կմ հատվածը՝ գոյություն ունեցող ջրանցքի ուղեգծին հարող համայնքապատկան տարածքներով:

Շինմոնտաժային աշխատանքներն իրականացվելու են ավանդական եղանակով՝ համապատասխան շինարարական մեքենաների ու մեխանիզմների կիրառմամբ: Աշխատանքների իրականացման համար նախատեսվում է օգտագործել բետոնային խառնուրդ, ամրաններ, ջրամեկուսիչ նյութեր, եռակցման էլեկտրոդներ և այլն:

Շինարարական տեխնիկայի մուտքը դեպի ոռոգման համակարգերի տարածքներ նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող ճանապարհներով, իսկ շինարարության նյութատեխնիկական մատակարարումն իրականացնել լիցենզավորված շինարարական կազմակերպություններից:

Շաղախը և բետոնը առաքվելու է մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով: Առաքումը կազմակերպվելու է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի շին. աշխատանքների անընդհատությունը:

Առանձին մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով բերվելու են անմիջապես շինարարական հրապարակ, որտեղ իրականացվելու է դրանց տեղադրումն ու պահեստավորումը:

Համաձայն հայտի գործունեության ընթացքում առաջանալու են բնապահպանական տեսակետից տարբեր վտանգավորության թափոններ, որոնք իրենցից ներկայացնում են շինարարության խառը թափոններ, ոչ պիտանի հանույթը և հողային աշխատանքների արդյունքում հողային, ավազային շլամը, ինչպես նաև շինարարական աշխատանքներում ներգրավված անձնակազմի կողմից առաջացրած կենցաղային աղբը:

Գործունեության իրականացման ընթացքում ջուրն օգտագործվելու է խմելու (187մ^3) և տեխնիկական (228մ^3) նպատակներով: Տեխնիկական ջուրը մատակարարվելու է մոտակա ոռոգման ցանցից, ջրատար մեքենաներով, Գյումրի համայնքի հետ պայմանագրի հիման վրա, տեխնիկական նպատակով ջուրն օգտագործվելու է տարածքների փոշենստեցման համար: Աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովվեն՝ տեղադրելով բիոզուգարաններ, իսկ խմելու ջուրը կմատակարարվի 20լ տարաներով:

Համաձայն նախնական գնահատման հայտի շինարարական աշխատանքները տևելու են՝

- ЛР տիպի վաքեր- 151մ^3 = 2 ամիս
- բնահող քանդում-4567մ^3=1.5ամիս
- միաձույլ բետոն – 86=0.7ամիս
- պողպատե խողովակների մոնտաժ- 1664մ =4 ամիս:

Շինարարության ընդհանուր ժամկետը կկազմի 8.3 ամիս՝ ներառյալ վեգետացիոն ժամանակահատվածը և հնարավոր եղանակային պայմաններից ելնելով շինարարության ընդհատումները:

Շինարարության ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ, այդ թվում՝ ավտոինքնաթափ, ավտոբետոնախառնիչ, բուլդոզեր, կոմպրեսոր, էքսկավատոր, զոդման ապարատ, գլդոն և այլն:

Ոռոգման համակարգի նախագիծը ենթադրում է հողային աշխատանքների իրականացում: Խրամների քանդման ընդհանուր մակերեսը կազմում է 2808քմ, ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ՝ 3494մ^3, 1250մ^3 ծավալով հողային զանգվածը կոգտագործվի, որպես հետլիցք, իսկ մնացած 2244մ^3 ծավալով հողային զանգվածը կտեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմնի կողմից օրենքով սահմանված հատկացված վայր: Տարածքում բուսահողը բացակայում է:

Ոռոգման համակարգերի բարելավմանն ուղղված աշխատանքները՝ համաձայն հայտի բնապահպանական և սոցիալական տեսանկյունից պարունակում են ցածր ռիսկեր: Ազդեցությունները լինելու են տեղայնացված, որոշ բացասական ազդեցություններ կանխատեսվում են շինարարության փուլում, սակայն դրանք կունենան սահմանափակ ազդեցություն և կկրեն ժամանակավոր բնույթ:

Ոռոգման համակարգի բարելավման աշխատանքների իրականցման տարածքներում բնական լանդշաֆտների, մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների, հողային ռեսուրսների, ինչպես նաև բուսական ու կենդանական տեսակների վրա զգալի բացասական ազդեցություններ չեն կանխատեսվում:

Ծրագրով նախատեսված աշխատանքները ներառում են արդեն գոյություն ունեցող ոռոգման համակարգերի վերականգնման աշխատանքներ, որոնք իրականացվելու են

նախկինում շինարարություն իրականացված տարածքներում՝ բնակելի տարածքներից դուրս: Նախատեսվող գործունեության իրականացման համար այլ տարածքներ չեն ընդգրկվելու:

Շինարարարության ընթացքում՝ տրանսպորտային միջոցների շահագործման ժամանակ կառաջանան փոշու, ազոտի, ածխածնի և ծծբի օքսիդների արտանետումներ և աղմուկի մակարդակի ավելացում:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, դրանց արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում: Այդ թվում՝

- շինարարության ընթացքում օդային ավազան փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով՝ ջրցանի կատարում,
- աղմուկ առաջացնող աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին,
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ,
- սորուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրության թաղանթով,
- սորուն շինարարական նյութերի և հողային զանգվածի տեղափոխում՝ փակ ծածկով մեքենաներով,
- հեղուկ նյութերի պահում հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,
- շինարարական աշխատանքներում ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավվում, ինչպես նաև ապահովել դրանք տեխնիկական նորմալ վիճակի շահագործումը,
- շինհրապարակում քանդման և շինարարության ընթացքում թափոնների տարանջատում,
- մթնոլորտային օդի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ անգամ,
- շինարարության ընթացքում աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների պահպանում և այլն:

Ամբողջ ծրագրի բնապահպանական միջոցառումների համար՝ շինարարության ընթացքում նախատեսվում է հատկացնել 10 մլն. դրամ:

Պատճառաբանական եզրահանգումներ. Ամփոփելով գնահատման և փորձաքննության արդյունքները, պետք է նշել, որ նախագիծը մշակվել է բնապահպանական և քաղաքաշինական ոլորտները կարգավորող ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմատիվաիրավական ակտերին համապատասխան:

Ծրագրի իրականացումը զգալի բացասական ազդեցություն չի ունենալու ոռոգման համակարգերն ընդգրկող բնակավայրերի պատմամշակութային կամ հնագիտական հուշարձանների վրա: Բոլոր աշխատանքներն իրականացվելու են բնակավայրի բնակելի տարածքից դուրս՝ արդեն գոյություն ունեցող ոռոգման համակարգի ուղեգծում կամ ուղեգծին զուգահեռ տարածքներում, որոնց վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից առկա են համապատասխան թույլտվություններ: Ընդհանուր առմամբ ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքները դրական ազդեցություն կունենան շրջակա միջավայրի, բնակչության սոցիալական վիճակի վրա, ջրագծի վերականգնումը կկրճատի ոռոգման ջրի կորուստները, շահագործման և պահպանման ծախսերը, կբարձրացնի ջրօգտագործող ընկերությունների աշխատանքի արդյունավետությունը:

Փորձաքննության ընթացքում հայտը շրջակա միջավայրի նախարարության դիտողություններով և առաջարկություններով լրամշակվել է: Փորձաքննության փուլերում օրենսդրությամբ սահմանված կարգով Շիրակի մարզի Գյումրի համայնքում իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինը և հանրությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, արտակարգ իրավիճակների, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Շիրակի մարզպետարանը, Գյումրու համայնքապետարանը:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական, հրդեհաանվտանգության և սանիտարական նորմերի պահպանմանը:
- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում հնարավորինս չխաթարել տարածքի էկոհամակարգը, լանդշաֆտը և հարակից շրջակա միջավայրը:
- Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա սահմանված ժամերին, հնարավորինս նվազագույնի հասցնելով աղմուկի և ճանապարհների առավելագույն ծանրաբեռնվածությունը:
- Շինարարական աշխատանքների ընթացքում բացառել հնարավոր շինաղբի կուտակումները:
- Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայգյուղշիննախագիծ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Շիրակի մարզի Սալվինազի ջրանցքի վերակառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի Գլխ. մասնագետ՝ Արմինե Վարդանյան